

**ANALYSIS OF THE
ARMENIAN-TURKISH PROTOCOLS**

**ԱՀԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱՆ**

ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2009

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված Արձանագրությունների ձևակերպումներում առկա են լուրջ ռիսկեր և բացթողումներ:

Նախաստորագրված է երկու առանձին Արձանագրություն, որոնցից մեկով հիմնվում են դիվանագիտական հարաբերություններ՝ սահմանի հաստատման դիմաց, իսկ մյուսով՝ բացվում է սահմանը պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողովի դիմաց:

Արձանագրություն N1.

Դիվանագիտական հարաբերություններ՝ սահմանի հաստատման դիմաց

Առաջին Արձանագրությամբ՝ «ՆՆ – Թուրքիայի միջ- դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին», կողմերը համաձայնության գալով 9 խնդրի շուրջ, համաձայնվում են հիմնել դիվանագիտական հարաբերություններ: 9 դրույթներից խնդրահարույց են յոթը.

1 «Ձգտելով հաստատել բարիդրացիական հարաբերություններ և զարգացնել երկկողմ համագործակցությունը քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում՝ ի շահ իրենց ժողովուրդների՝ համաձայն հարաբերությունների զարգացման մասին նույն օրը ստորագրված Արձանագրության»

Այս պարբերությամբ սահմանվում է Ահձանագրությունների փոխկապակցվածությունը: Ինչպես երևում է մյուս Արձանագրության տեքստից /տես ստորև/, այդ փոխկապակցվածությունը տարբեր է, ինչը հնարավորություն է տալիս վավերացման ընթացքում տարբեր մանյուվրներով հետաձգել հայկական կողմի ազդարարվող նպատակը՝ սահմանի բացումը:

2 «Վերահաստատելով հավասարության, ինքնիշխանության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքները հարգելու իրենց երկկողմ և բազմակողմ պարտավորությունները,»

Նախ և առաջ, մտահոգություն է առաջացնում այս պարբերության հայերեն և անգլերեն տեքստերի լուրջ տարբերությունը. հայերեն՝ «Վերահաստատելով այսինչ սկզբունքները հարգելու երկկողմ և բազմակողմ պարտավորությունները», անգլերեն՝ «Վերահաստատելով հանձնառությունը երկկողմ և միջազգային հարաբերություններում հարգելու և ապահովելու հարգանքն

այսինչ սկզբունքների վերաբերյալ» /“Reconfirming their commitment, in their bilateral and international relations, to respect and ensure respect for the principles of.....”/: Ակնհայտորեն, անգլերենով ձևակերպումները ավելի կարծր են: Սակայն ավելի կարևոր է, թե ինչ սկզբունքների մասին է խոսքը: Թվարկված սկզբունքները ՅԵՄ-ի սկզբունքներից Ակտի սկզբունքներն են և այդ առումով, կարծես թե, առանձնապես խնդիր չկա: Սակայն, ՅԵՄ-ի սկզբունքներից Ակտի ութը բովանդակային սկզբունքից կողմերը միջազգային հարաբերություններում վերահաստատում են իրենց հարգանքը միայն այն չորսի նկատմամբ, որոնք օգտագործվում են մեր դեմ ԼՂՀ կարգավորման գործընթացում՝ ինքնիշխանություն, ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականություն և սահմանների անխախտելիություն: ԼՂՀ հիմնահարցում հայկական դիրքորոշման առանցքային՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի նկատմամբ կողմերն այս Արձանագրությամբ իրենց հարգանքը չեն վերահաստատում:

3 «Հաշվի առնելով երկու երկրների միջև՝ ամբողջ տարածաշրջանում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդմանը նպաստող, հավատի և վստահության միջավայր ստեղծելու, ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից զերծ մնալու, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման մթնոլորտ ստեղծելու կարևորությունը.»

Այս պարբերությունն առաջին հայացքից նույնպես ընդհանուր բնույթի է: Թվարկվում է ՅԵՄ-ի սկզբունքներից Ակտի ևս երեք սկզբունք: Սակայն եթե նախորդ պարբերությունում կողմերը «վերահաստատում են իրենց հարգանքն երկկողմ և միջազգային հարաբերություններում», ապա այստեղ կողմերը ընդամենը «հաշվի են առնում այս սկզբունքների շուրջ մթնոլորտ ստեղծելու կարևորությունը», ընդ որում բացակայում է «միջազգային հարաբերություններ» բառակապակցությունը: Նույնիսկ դիվանագիտությունից հեռու մարդկանց համար տարբերությունն ակնառու է: Մինչդեռ, Հայաստանն է շահագրգռված, որ Թուրքիան հարգի և միջազգային հարաբերություններում պարտադրի հարգանք ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից զերծ մնալու և վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքների նկատմամբ:

Այսպիսով, Արձանագրությունում տարբեր համատեքստում հիշատակվում են Հելսինկյան Եզրափակիչ Ակտի բոլոր բովանդակային սկզբունքները, բացի Ազգերի ինքնորոշման սկզբունքից: Ընդդրում, Հայաստանի համար կարևոր սկզբունքները «հաշվի են առնվում», իսկ ԼՂՀ դեմ աշխատող սկզբունքները «վերահաստատվում են»: /տես Աղուսյակ/

Հելսինկյան Եզրափակիչ Ակտի սկզբունք	Արտացոլումը հայ-թուրքական հարաբերությունները կարգավորող Արձանագրություններում
հավասարություն, ինքնիշխանություն	վերահաստատվում է հարգելու և հարգանքն ապահովելու հանձնառությունը երկկողմ և միջազգային հարաբերություններում
ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից զերծ մնալ	հաշվի է առնվում մթնոլորտ ստեղծելու կարևորությունը
սահմանների անխախտելիություն	վերահաստատվում է հարգելու և հարգանքն ապահովելու հանձնառությունը երկկողմ և միջազգային հարաբերություններում
տարածքային ամբողջականություն	վերահաստատվում է հարգելու և հարգանքն ապահովելու հանձնառությունը երկկողմ և միջազգային հարաբերություններում
վեճերի խաղաղ կարգավորում	հաշվի է առնվում մթնոլորտ ստեղծելու կարևորությունը
այլ պետությունների ներքին գործերին չմիջամտել	վերահաստատվում է հարգելու և հարգանքն ապահովելու հանձնառությունը երկկողմ և միջազգային հարաբերություններում
մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգանք	հաշվի է առնվում մթնոլորտ ստեղծելու կարևորությունը
ազգերի հավասար իրավունքներ և ինքնորոշում	բացակայում է

4 «Վերահաստատելով երկու երկրների միջև գոյություն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով»

Այս պարբերությունում նույնպես առկա է հայերեն և անգլերեն տեքստերի լուրջ տարբերություն. հայերեն՝ «Վերահաստատելով» սահմանի ճանաչումը, անգլերեն՝ «Հաստատելով» /«Confirming»/: Իհարկե, ճիշտն անգլերենն է: Ոչ միայն այն պատճառով, որ այն գերակա է, այլ նաև այն պատճառով, որ Հայաստանն երբեք չի հաստատել հայ-թուրքական սահմանը, որպեսզի այժմ վերահաստատի: Տպավորություն է ստեղծվում, որ անհաջող փորձ է արվել մեղմել իրականությունը: Իսկ իրականությունն այն է, որ այս դրույթով Հայաստանը հաստատում է հայոց պատմության ամենամոթալի՝ 1921 թվականի Կարսի պայմանագրով ճանաչված սահմանը: Արձանագրությունը միանշանակ հղում է կատարում Կարսի պայմանագրին, չհիշատակելով այն. «երկու երկրների միջև գոյություն ունեցող

ընդհանուր սահմանը» ճանաչված է Կարսի պայմանագրով, որին նախորդել է Մոսկվայի պայմանագիրը /Լենին-Աթաթուրք պակտը/: Այսպիսով, այս Արձանագրությամբ, խաղաղ պայամաններում, առանց ռազմական պարտության Չայաստանը հաստատում է կապիտուլյացիոն պայմանագրով ճանաչված սահմանը:

5 «Կարևորելով ԻՐԵՆՑ որոշումը՝ բացելու ընդհանուր սահմանը.»

Չատկանշական է, որ երկրորդ Արձանագրությամբ կողմերը «համաձայնվում են բացել ընդհանուր սահմանը», այսինքն, տարընթերցում լինել չի կարող. Արձանագրություններից հետևում է, որ Չայաստանն ու Թուրքիան միասին որոշել են բացել սահմանը, այսինքն Չայաստանն էլ էր փակել սահմանը, եթե այժմ որոշում է այն բացել:

Ընդհանրապես, սահմանի շրջափակումը թշնամական քայլ է: Չայ-թուրքական սահմանի փակումը կոնկրետ պատերազմական քայլ էր՝ փակելով սահմանը Թուրքիան նպատակ ուներ օգնել Ադրբեջանին Չայաստանի դեմ պատերազմում և ծնկի բերել Չայաստանը: Այսինքն, Չայաստանն ենթարկվել է պատերազմական գործողության՝ շրջափակման: Չայաստանն իր հերթին երբեք չի փակել սահմանը: Սակայն, ստորագրելով այս Արձանագրությունները, Չայաստանը, լինելով շրջափակման ենթարկված երկիր, հավասար պատասխանատվություն է ստանձնում թուրքերի հետ սահմանի փակ լինելու համար: Այս Արձանագրությունները թափախարելով Թուրքիան մաքրվում է Չայաստանը տասնամյակից ավել շրջափակելու մեղադրանքից և, մի քանի տարուց, կսկսի ժխտել շրջափակման փաստը:

6 «Չաստատելով իրենց հանձնառությունը՝ ձեռնպահ մնալ բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն վարելուց»

Ոչ միայն Ցեղասպանության ճանաչմանն ուղղված ցանկացած քայլ, այլև Ցեղասպանության ցանկացած հիշատակում Չայաստանի Չանրապետության կողմից հանգիստ կարող է որակվել, որպես «բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն»: Ավելին, Չայաստանից կարող են պահանջել որ պետությունը, ի դեմս, ասենք, Սփյուռքի նախարարությունը, չսատարի այն սփյուռքյան կառույցներին, որոնք ակտիվ են Ցեղասպանության ճանաչման գործում:

7 «Դատապարտելով ահաբեկչության, բռնության և ծայրահեղականության բոլոր ձևերը՝ անկախ դրանց պատճառներից և խոստանալով ձեռնպահ մնալ նման գործողությունները խրախուսելուց ու հանդուրժելուց և համագործակցել դրանց դեմ պայքարում»

Տեքստում բացակայում է «միջազգային» բառը: Դա նշանակում է, որ խոսքը գնում է ահաբեկչության մասին՝ ազգային օրակարգերի մակարդակով: Հայաստանում չկա կազմակերպություն, որն ահաբեկչական ճանաչված լինի և հայաստանյան օրակարգ ահաբեկչության դեմ պայքարը մտնում է այնքանով, որքանով մեր երկիրը, ի թիվս այլոց, աջակցում է միջազգային ահաբեկչության դեմ պայքարին: Հակառակը, Թուրքիայում ահաբեկչության դեմ պայքարը արտաքին քաղաքականության և, մասնավորապես, Հայաստանի հետ հարաբերություններում կարևոր բաղադրիչ է: Թուրքիայում պաշտոնապես ահաբեկչական են ճանաչված ԱՍԱԼԱ-ն և այլ հայկական խմբավորումները, ինչպես նաև PKK-ն:

Այս առումով, առանձնապես, մտահոգիչ է, որ կողմերը «դատապարտել են ահաբեկչությունն ու ծայրահեղականությունը ԱՆԿԱԽ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ» և «խոստանում են ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ դրանց դեմ պայքարում»: Հայկական օրակարգի տեսնակյունից անհասկանալի է նաև «ծայրահեղականություն» եզրույթը, որով Գորբաչևը բնորոշում էր ղարաբաղյան շարժումը: Մինչդեռ, թուրքական օրակարգում ծայրահեղականության դեմ պայքարը կոնկրետ բովանդակություն ունի՝ դա պայքարն է քրդական ազգային շարժման դեմ:

Արձանագրությունների վավերացումից հետո, ղեկավարվելով այս դրույթով Թուրքիան, իրավական հարցերով ենթահանձնաժողովի միջոցով, «համագործակցության» ոգով կարող է Հայաստանից պահանջել հանձնել հայկական խմբավորումների կոնկրետ մարտիկների կամ իրականացնել կոնկրետ վայրերի ինսպեկցիա «ահաբեկչական ճամբարների բացահայտման» պատրվակով: Բնական է, որ պահանջը կմերժվի, բայց մեզ կմեղադրեն ահաբեկիչներին աջակցելու և պարտավորություն չկատարելու մեջ:

«Համաձայնեցին հիմնել դիվանագիտական հարաբերություններ և փոխանակել դիվանագիտական ներկայացուցչություններ:»

Սա եզրափակիչ դրույթն է: Այսպիսով, այս Արձանագրությամբ.

- վերահաստատելով Հելսինկյան Եզրափակիչ Ակտի Հայաստանի համար անբարենպաստ սկզբունքները.

- չհիշատակելով Հելսինկյան Եզրափակիչ Ակտի

- Հայաստանի համար բարենպաստ սկզբունքը.
 - հաստատելով կապիտուլյացիոն պայմանագրով ճանաչված սահմանը.
 - կիսելով Հայաստանի շրջափակման պատասխանատվությունը.
 - դատապարտելով ահաբեկչությունն ու ծայրահեղականությունը՝ անկախ պատճառներից և խոստանալով համագործակցել դրանց դեմ պայքարում,
- Հայաստանը ընդամենը ստանում է դիվանագիտական հարաբերությունների հիմնում և դիվանագիտական ներկայացուցչությունների փոխանակում:

Արձանագրություն N2. Սահմանի բացում պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողովի դիմաց

Երկրորդ Արձանագրությամբ՝ «ՆՆ – Թուրքիայի միջ– երկկողմ հարաբերությունների զարգացման մասին», կողմերը համաձայնության են գալիս երեք հարցի շուրջ.

- սահմանի բացում
- համագործակցության ուղղություններ
- միջկառավարական հանձնաժողով իր ենթահանձնաժողովներով, որոնք իրականանելու են համագործակցությունը

Արձանագրությանը հավելվում է գործողությունների ժամանակացույցը /ճանապարհային քարտեզը/:

«Ղեկավարվելով նույն օրը ստորագրված Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությամբ»

Ինչպես երևում է, եթե նախորդ Արձանագրությունը ընդամենը հիշատակում էր այս Արձանագրությունը, ապա այս Արձանագրությունը «ղեկավարվում է» դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությամբ: Այս տարբերությունը նշանակում է, որ նախ պետք է վավերացվի Դիվանագիտական հարաբերությունների մասին արձանագրությունը:

«Համաձայնեցին բացել ընդհանուր սահմանը սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում.»

Այս ձևակերպումը առաջին Արձանագրության՝ «Կարևորելով ԻՐԵՆՑ որոշումը՝ բացելու ընդհանուր սահմանը.» ձևակերպման տրամաբանական շարունակությունն է: Առանց

առաջին Արձանագրության վերլուծության փաստարկները կրկնելու, նշենք. այսպիսի ձևակերպմամբ Հայաստանը կհսում է հայթուրքական սահմանի շրջափակման պատասխանատվությունը:

Արձանագրության երկրորդ կետով կողմերը համաձայնվում են հարաբերությունների զարգացման ութ ուղղության, որոնցից մեկն էլ «պատմական հարթությունն» է: Ահձանագրությունում այն ձևակերպված է հետևյալ կերպ.

«Համաձայնեցին նաև իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար.»

Ինչպես երևում է երկխոսությունը ոչ թե հիպոտետիկ նպատակներ ունի, այլ շատ կոնկրետ. «գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար»: Ընդ որում, առաջարկները պետք է ձևակերպվեն «պատմական փաստաթղթերի և արխիվների անկողմնակալ գիտական ուսումնասիրության միջոցով»: Այդ առաջարկները ձևակերպելու է միջկառավարական հանձնաժողովի մաս կազմող պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողովը: Ենթահանձնաժողովում մասնակցելու են հայ, թուրք, ինչպես նաև շվեյցարացի և այլ միջազգային փորձագետները: Արձանագրություններում ամրագրված է այս ենթահանձնաժողովի աշխատանքի սկիզբը՝ ուժի մեջ մտնելուց հետո 4 ամսվա ընթացքում: Սակայն ամրագրված չէ աշխատանքների ավարտը՝ համաձայն Արձանագրության 3-րդ կետի ենթահանձնաժողովները «կգործեն շարունակաբար մինչև իրենց ՄԱՆԴԱՏԻ ԱՎԱՐՏԸ»: Անհասկանալի, թե ով և ինչպես է որոշելու ենթահանձնաժողովի «մանդատի ավարտը»:

Մոցիալական քաղաքականության և զարգացման կենտրոն

Մոցիալական քաղաքականության և զարգացման կենտրոնը հիմնադրվել է 2004 թվականին: Կենտրոնը նպաստում է այնպիսի մոցիալական քաղաքականությանը, որը ստեղծում է նոր և բարելավված միջոցներ կարիքների բավարարման, խնդիրների լուծման համար, կառուցում է համայնքներ, որոնք հաջողությամբ ուղղորդում են դարձնում երեք հիմնական խնդիրներին՝ աղքատության հաղթահարմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և մոցիալական ինտեգրմանը, ինչպես նաև աջակցում է այնպիսի համայնքների ստեղծմանը, որոնք նպաստում են անվտանգությանը, արդարությանը, ազատությանը և ներդաշնակ հասարակությանը և առաջարկում առավել հնարավորություններ կյանքի ավելի բարձր ստանդարտներ բոլորի համար:

Ամփոփում

Բազմիցս նշվել է, որ, քանի դեռ Թուրքիան չի ճանաչել Ցեղասպանությունը, Հայաստանի հետ Թուրքիայի համար պատմական հարթության միակ հարցը Ցեղասպանության եղելության հարցն է: Անխուսափելի է, որ միջկառավարական ենթահանձնաժողով թուրքերը բերելու են Ցեղասպանության եղելության հարցը: Ենթահանձնաժողովի քննարկմանը չմասնակցելը կարող է որակվել սաբոտաժ, երկխոսությունից խուսափում, ինչպես նաև պայմանավորվածությունների խախտում, ինչի արդյունքում սահմանը կարող է նորից փակվել:

Ակնհայտ է, որ այս Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո կդադարի Ցեղասպանության ճանաչման գործընթացը, ընդ որում, քանի որ ենթահանձնաժողովի մանդատը անորոշ ժամկետով է, այն կդադարի անորոշ ժամկետով:

Իհարկե, մտահոգություններ է առաջացնում նաև բնապահպանական խնդիրների առանձին ենթահանձնաժողովը, ինչը Թուրքիային լեզիտիմ առիթ է տալիս միջամտել հայկական ատոմակայանի հետ կապված խնդիրներին: